

ԿՐԼԵԿԵԱՆ ՔՈԼԵՐ

Ա. — ԵՐԲՈՐ ԲԱՑՈՒՐ...

Այնտեղ ծովի համբոյրն էր սուրբ,
Այնտեղ բացուող այգն էր պայծառ.
Եւ շուշաններ լոյսի պէս նուրբ
Կը բուրէին մեզի համար:

Որքան երկինքն էր ասմազուն,
Այնքան զմրուխտ դաշտերն էին.
Որքան գեփիւնն էր կախաւուն,
Այնքան զրւարթ հարս էր բարտին:

Աստուած շինեց գայն ոսկեղէն
Ափսէի ձեւ, շուրջը կիտուած,
Ու գայն տըւաւ հայ սրտերէն,
Կարմիր վարդեր ու շաղը բաց:

Երբոր կու գար Մայիսն ոսկի,
Ծաղիկ ծաղկի համբոյր կու տար.
Ո՞ր խրեփքն էր առանց երգի,
Ո՞ր դեղձներն չունէր գոհար:

Ո՞րքան ուրախ երկինք կ'ելլէր
Երդիւններու ծուխը բերել.
Արքան ոսկի դարպաս ունէր,
Եւ ժողովուրդն՝ արեւի բեր:

Արարատէն մասունք առին,
Տարին մինչեւ հեռու ծովեր,
Հայ մեռնող մկրտեցին,
Որ վահագնի բոցը վառէր:

Հագար սրտեր արին տըւին,
Հագար բագուկ նիգակ եղան,
Թիկունք տըւաւ բերդը բերդին,
Ինչպէս երկինքն աստղերը կան:

Ու Կիլիկիան, մեր Կիլիկիան...
Զեմ գիտեր ո՞ր քարն համբուրեմ,
Ո՞ր վանքին մօտ, իբրեւ խորան,
Աղօթական ծունկըս դընեմ:

Ծովը ծովին ալիք կու տար,
Կը հասնէին նաւեր անծայր.
Կէսը փըրփուր, կէսը մարմար,
Այսան էր հոն փաղափամայր:

Աւա՛ղ, ինչո՞ւ սրտին զարկին
Ժանգոտ դանակ եւ նեղութիւն,
Կարելի՞ է անմեղ կոյսին
Հողին յանձնել Գեղեցկութիւնն:

Կարելի՞ է մերժել համբոյրն
Այն ծաղկազարդ հովիտներուն,
Այն վանքերուն աստուածաբոյր,
Որոնց երգն էր խաղաղութիւն:

Կարելի՞ է փակել դռներն՝
Ուր Բարութիւնն էր բագուհի.
Սրբութիւնն ուր պատիւ ունէր,
Եւ օրոցքն էր խորան սրտի:

Եւ կը կոփեն սուրբ հողն հիմա
Բարբարոսներ առանց անուան.
Մայիսը միշտ լալով կու գայ,
Որոնելու Մեր Կիլիկիան:

Կ'ըսեն թէ Յո՛յսը մահ չունի,
Հառաջայք մ'է ձեռքն արդարին.
Շանքի աստուած մը կը փոխուի,
Փակուած դռներն երբոր բացուին...:

Բ. — ԼԵՒՈՆԻ ԲԵՐԴԷ

Երկինքէն կախ, անըրջանփի պէս աղուոր,
Ասպետներու բոյնը շինուած աստղերով,
Դեռ կը նայի մինչեւ ծովերն հեռաւոր,
Արեւուն հետ յաւերժութեան աչքերով:

Եւ քար քարի կատաղօրէն քեւ տըւած,
Ինչպէս մարտի ելլող հազար հսկաներ,
Մարտկոցներ են, ուր դեռ արիւնն չէ ցամքած,
Դիւցազներու՝ որոնց անունն Հայկազ էր:

Դեռ կը շրջի ոսկի ըստուերն արփայի,
Դեռ պահած է արփին դրօշներ ոսկեծայր,
Եւ պատմութիւնն անուն եւ փառք կենդանի
Կը փանդակէ լոյս մատներով ժայռէ ժայռ:

Բոյն է հիմա արծիւներու երկնաքիռ,
Որ հողածին մահկանացուն չեն մանչնար.
Մ'ընչ գագաթին ծիածաններ եօթնածիր
Շրջան կ'ընեն, որոնք չունին արեւմար:

Այնտեղ ձիւնի տեղ մեր հաւատքն է գագաթ,
Այնտեղ շաչող փորձրիկներն են զինուոր.
Թէ իր կուրծքին զարնեն հազար սուր երկաթ,
Պիտի լըսեն փառքի գանգիւն հեռաւոր:

Զեմ գիտեր թէ ե՛րբ պիտի գայ հին գարուն,
Շուրջը ծաղիկ եւ ցնծութիւն սփռելու.
Ե՞րբ պիտի գայ մեղրամոմէ կուտութիւնն,
Իր պարերով փաջերու գովքն հիւսելու:

Ոտներուն տակ աշխարհն եթէ կը սողայ,
Թէ բռնութիւնն անմեղ արիւն կը սիրէ,
Ո՞վ Աստուած իմ, ձեռքդ քարի թող ըլլայ,
Լեռնի բերդն Հայուն համար միշտ պահէ:

Գ. — ԼԵՒՈՆ ՄԵՐԱԳՈՐԾ

Արփայ, որ միշտ արծիւի պէս ծանրաքեւ,
Կը սաւառնիս երկնքի մէջ պատմութեան,
Դարերն երբեք չըցանցեցին փոշի սեւ
Թագիդ վըրայ եւ հետքերուդ մեծութեան:

Ու տակաւին կ'անցնիս լեռներ, հովիտներ,
ինչպէս արփին՝ որ չի մանչնար ժամանակ.
Կը շողշողան արփայական գրրահներ,
Կը փայլակէ պատերազմի դէմ նիգակ:

Ասպետ մ'էիր, որուն բոցն էր երիվար,
Եւ Կիլիկիան ուխտի խորան քեւիդ տակ.
Հոն Եւրոպան ընծաներովը կու գար,
Ծովն իսկ ըմբոստ հրամանիդ էր հըպատակ:

Առիւծադէմ դրօշակդ երբոր կը ծըփար,
Կը կանգնէին շուրջըդ հագար դիւցազներ,
Եւ դուն, արփայ, աստուածներնու հաւասար,
Կ'երկարէիր մականդ մարտի հըրաւէր:

Ո՛հ, դուն երբեք պարտութիւններ չըգիտցար,
Առիւծն երբեք քաթն արիւնոտ չըլիգեց.
Միշտ յաղթական եւ միշտ խաչին գօրավար,
Կերտեցիր փառք, Կիլիկիան՝ գերդ սիրտըդ մեծ:

Բայց մինչեւ ե՞րբ վերադարձիդ ըսպսեմք,
Ե՞րբ արեւներ պիտի պնեն Կիլիկիան,
Եւ շանքն ըլլայ Արդարութեան ձեռքին գէմք,
Անունդ ըլլայ՝ երկինք բռնող ծիածան:

Գ. — ՏԱՐՄԱՆ

Հին ես՝ անյայտ ժամանակէն աւելի,
Տեսայ որմերդ՝ մամուռ կապած, անբարբառ.
Եւ պատմութեանդ վրայէն անցած էր աշխարհ,
Մեկնած էր լոյսն արեգակին հետ կեանքի:

Հագիւ կոխան քար մը գըլուխն իր ցըցած,
Վըկան էր լոկ սիրող սրտին երբեմնի.
Չունէիր դու խաչեր նըման մանանչի,
Ոչ սաղմոսի արձագանգն էր մընացած:

Թշնամին ալ այսօր խորունկ չեն քաղեր,
Ոչ կը բանան վըրան ցաւի մանապարհ:
Անցո՛րդ բոպիկ, Տարսոնն որջ չէ քեզ համար,

Սուրբ է այդ հողն երկու անգամ. մի՛ կոխեր,
Եւ մի՛ սըփոքր այնտեղ ըստուերդ մեղաւոր.
Զաւակ ունի արեգակին համագոր:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

• Գ Ր Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն •

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻԼԻԿԻԱ – ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ:
Գրեց՝ ԲԺ. Յարութիւն Տէր Ղազարեան:
Անթիլիաս, 1966, էջ ԺԳ+324, պատկե-
րագարդ:

Անձնական երկար փորձառութեամբ, ի-
րապաշտ եւ մանրագին ուսումնասիրու-
թեամբ պատրաստուած գիրք մը, որ սըր-
տով զբուսած է. անպայման կը զբաւէ ըն-
թերցողին սիրտն ալ, եւ կը դառնայ հո-
գեկան հաղորդակցութիւն մը՝ միասին
չըջելու այն վայրերը, որ էին եւ են մեր
ցանկալի Կիլիկիան:

Եթէ Մեծն Հայաստան մեր սիրտն էր,
մեր ամբողջ հոգին ու մարմինը, Կիլի-
կիան մեր աչքն էր՝ դէպի ծովերը նայող:
Իմաստուն մարդիկ, արիւնոտ Հայաստա-
նէն իրենց քայլերը մղեցին դէպի Կիլի-
կիա (1080). պայքարելով, հերոսու-
թեամբ, թիզ առ թիզ հող զբաւելով՝
կանգնեցին թաղաւորութիւն մը, որ ար-
շաւոյսէն մինչեւ վերջալոյս, փառքի եւ
հաղթանքի ծիածան մը ձգեց Տաւրո-
սէն մինչեւ հեռաւոր ծովերը:

Իրաւունք ունէր յարգելի ԲԺԼԼԸ, տե-
ղագրութիւն մը հրատարակելէն առաջ՝
երթալ չըջիլ իր հայրենի աշխարհը, շո-
քափել քարերը, համբել գետերն ու կա-
մուրջները, եւ հիանալ բարձրարեւծ բեր-
դերուն վրայ. վանքերու սրբատաշ քա-
րերն համբուրել, ուր Վկայասէր մը,
Շնորհալի մը, Լամբրոնացի մը ճգնէր եւ
երգեր են Աստուծոյ փառքին հետ՝ հայ-
րենի հոգն ու ասպետներուն սուրը:

Այս 324 էջոց մատանը պիտի գար ան-
շուշտ լրացնելու եւ հաստատելու Այիւղա-
նի Սիսուանը, այն տարբերութեամբ՝ որ
մէկը իր աչքերով տեսածը կը նկարագրէ,
միւսն իր հոգիով տեսածը. բայց երանի՜
անոնց՝ որ չեն տեսներ եւ կը հաւատան:
Այիւղան առանց տեսնելու, տեղեկութիւն-
ներ քաղելով տեղացիներէն, պըպտելով

պատմութիւնը, կազմեց հսկայ մատեան
մը՝ ուր տեղագրութեան հետ կայ պատ-
մական, գիւտական, առեւտրական եւ
եկեղեցական ճոխ համագրութիւն մը,
կենդանի եւ կատարեալ պատկերը տալու
համար այն Կիլիկիոյ, ուր տակաւին կը
սաւառնի մեծագործ Լեւոնի հոգին եւ իր
արծունջան դրօշակը:

ԲԺ. Յարութիւն Տէր Ղազարեան պատ-
մական ակնարկէ մը ետք, մեզ կ'ա-
ռաջնորդէ չըջիլ Կիլիկիոյ պատմական
վայրերը: Աշխարհադրական ուղղութիւն
մը բռնած չէ, այլ իր ակնարկը տարա-
ժած է բովանդակ Կիլիկիոյ վրայ. ոչ ալ
նահանգէ նահանգ կ'անցնի՝ դասաւոր-
ուած տեղագրութիւն մը տալու համար:
Յարգելի ԲԺԼԼԸ բաժնած է իր գիրքը՝
նիւթերու համեմատ. այս ալ լաւ դրու-
թիւն մըն է՝ հետաքրքրուողին դոհացում
տալու համար: Թանկագինն այն է՝ որ ա-
նիկա կը նկարագրէ իր աչքերով տեսած
վայրերը. անշուշտ շատ տարիներ առաջ,
երբ տակաւին երիտասարդ էր եւ իր ծը-
նըդաւայր Մարաշին մէջ կը բնակէր.
նոթագրած է իր տեսածները, մաս մը յի-
շագործեալ եւ մաս մըն ալ ուրիշներու
հաւաստումներու վրայ հիմնուած՝ կազ-
մած է իր տեղագրութիւնը: Յարգելի հե-
ղինակը ամէն ջանք թափել է՝ իր լաւա-
գոյնը տալու համար: Ան չէ դոհացած
բերդի մը, կամ վանքի մը տեղը, կամ
շինութեան թուականը ճշտելով, այլ հիւ-
սած է անոր շուրջ պատմական անցքերը,
վեր հանելով անոր գերը՝ քաղաքական
կամ կրօնական դէպքերու շրջանակին
մէջ. այսպէս, ընթերցողը գրեթէ ամբող-
ջական զգալիար մը կ'առնէ այդ վայ-
րերու մասին: Եթէ ամէն կողմ աւերակ
եւ փշուրած քարեր տեսած է հեղինակը,
եւ ոչ թէ կանգուն տաճարներ, ինչպէս Ս.
Էջմիածին մը կամ Հոփսիմէ մը, պատ-
ճառն այն էր՝ որ դորժածուած քարերը
վատ տեսակ էին, եւ բարբարոսներն ա-
ւելի վատ եղեր են քանդելու քրիստոնէ-
ական սրբավայրը եւ ջնջելու հայկական
որեւէ յիշատակ: